ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 21.10.2024թ. հ.172 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանյան լճի ափամերձ 1,5 հա տարածքում 2023-2024 թվականներին իրականացվել է Երևանյան լճի ռեկրեացիոն գոտու հիմնում, որն իր տեսակով բացառիկ է Երևան քաղաքում:

Ինչ վերաբերում է Երևանյան լճում ձկնորսության զարգացմանը, ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի քաղաքային կենտրոն մասնաճյուղից ստացված Երևանյան լճի ջրերի մանրէաբանական հետազոտությունների փորձագիտական եզրակացությունների համաձայն պահանջվում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովելու, ջրային գործոնով պայմանավորված աղիքային վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու նպատակով՝ ուժեղացնել հսկողությունը Երևան քաղաքի բաց ջրավազաններում, այդ թվում՝ Երևանյան լճում լողը և ձկնորսությունը թույլ չտալու համար: Այդ իսկ պատճառով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից համապատասխան տարածքներում տեղադրվում են լողը և ձկնորսությունն արգելող վահանակներ, ինչպես նաև բնակչության հետ տարվում են իրազեկման աշխատանքներ: Երևանի քաղաքապետարանի կողմից վերջին տարիներին աշխատանքներ են տարվում Հրազդան գետի և Երևանյան լճի էկոլոգիական վիճակի բարելավման, ջրերի մաքրման ուղղությամբ: Լճում համապատասխան որակի ջրային ռեսուրսների առկայության դեպքում հնարավոր կլինի անդրադառնալ ձկնորսության զարգացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ